Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11301

Հոմերոս և

ստեղծագործությունները սոցիալ-քաղաքական

հայացքներ.

3 (02)
Զ-77

Թիֆլիս.

407
42-V/20
308
01 DEC 2009
65

ՊՐՈՖ. ՎԵՐՆԵՐ ԶՈՄԲԱՐՏ

ԹԷ ԻՆՉՈՒ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ ԱՄԵՆՔԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ ԵՆ

3(02)
Հ-77

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Կգ

ԵՒ

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

սահ. 14.Հ

Գ՝երմ. Թարգ.

ԱՐՏԱՇԷՍ ԱԲԵՂԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաձաղ տպարան ,,ՀԵՐՄԷՍ'' Ընկ. Մադաթ. փող., 15.
(110)

3(02)
Հ-77

13.04.2013

11301

Дозволено цензурою. Тифлисъ, 8 іюля 1905 г.

Թէ ինչու մեր օրերում ամենքին հետաքրքրում են տնտեսական եւ սոցիալ—քաղաքական հարցեր *)

I.

Մեր հասարակական կեանքին թեկուզ թոյլ ուշադրութեամբ հետեւող իւրաքանչիւր անհատ անխուսափելիօրէն դիտում է, որ տնտեսական և սոցիալ-քաղաքական պրոբլեմներն սկսում են զբաղեցնել հասարակութեան համարեա բոլոր խաւերը, որ ժամանակակից կուլտուրական պետութիւնների մէջ կարծէք չի գտնուիլ այլ ևս մի անձնաւորութիւն, որի համար գէթ առժամայն չծագէր այն անհրաժեշտութիւնը, որ նա այսպէս կամ այնպէս սահմանած է ինքն իրեն համար պար-

*) Warum interessiert sich heute Jedermann für Fragen der Volkswirtschaft und Sozialpolitik? Von Werner Sombart, Professor a. d. Universität Breslau. Leipzig, 1904.

15864-57

զել տնտեսական կեանքի յարակից երևոյթները, որ նա ևս հաշուի պիտի առնէ տընտեսական և սոցիալական քաղաքականութեան նպատակակէտերը։

Արժէ ուրեմն մի հայեացք ձգել այլազան զբաղմունք ունեցող և հասարակական տարբեր դիրք գրաւող շրջանների վրայ՝ տեսնելու համար, թէ այդ շրջաններից իւրաքանչիւրում որ չափով են զարթնում տնտեսական և սոցիալ-քաղաքական պրոբլեմներ։

Մեր տեսութիւնը «համալսարանական մարդկանցից» սկսելով, որոնց մենք դասաւորենք ըստ ֆակուլտետների, հանդիպում է մեզ ամենից առաջ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԸ ԿԱՄ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԸ.

Ի՞նչ կրօնական համայնքի առաջնորդ կուզէ լինի նա՝ կարող է հեշտութեամբ պատահել, որ նա իր պաշտօնի գլուխ անցնելու օրից իսկ նկատէ, որ ինքն ապրում է մի այնպիսի համայնքի մէջ, որը գտնւում է, նորա համար սկզբում անմեկնելի, եռող վիճակի մէջ։ Նա անտարակոյս հետաքննել կըսկըսէ, թէ ինչ հանգամանքների վերադրելու են իշխող դժգոհութիւնը, կարիքներն և հոգ-

սերը։ Ու հովուի հետախուզող ջանքերը կըզարնուին տնտեսական հիմնապատճառների։ Օրինակ՝ կարող է պատահել, որ գիւղական տնտեսութիւնը մեծապէս վնասւում է արտասահմանեան մրցումից և կամ այն երևոյթի ազդեցութիւնից, որին մենք «փախուստ գիւղից» (Landflucht) *) անուանենք տալիս. կամ թէ կարող է պատահել, որ գիւղական հասարակութիւնը, որին հովւում է քահանան, վաշխառուների ճանկերում հարբստահարուել, արիւնքամ է դարձել։ Եւ ահա փորձեր են անւում համայնական կրեդիտային կազմակերպութիւնների միջոցով կռուել չարիքի դէմ։ Վերցնենք և այն դէպքը, երբ քահանան հովւում է գործարանական ազգաբնակութիւն։ Նա կարող է դիտել, որ համայնքի միտքն զբաղուած է աշխատանքի պայմանների բարեփոխութեան հարցով, աշխատանքի օրուայ և կամ բանուորական ներկայացուցչութեան և նման հարցերով։ Կարող է պատահել, որ բանուոր դասակարգը հենց նոր է ձեռնարկել մի հսկայական գործադուլի, և կամ նոր է վերջ տրուել նորան։

*) Այսինքն երբ գիւղի ազգաբնակութիւնն անդադար քաղաք է գաղթում։

Ուրեմն այսպիսի պայմաններում ապրող համայնքի հոգեւոր հայրն ինչպէս կարող է բարեխղճօրէն ծառայել իր կոչումին, եթէ նա հասկացողութիւն անգամ չունենայ այն բանի մասին, ինչ աղմկում է իր համայնքի անդամների ուղեղն ու սիրտը։ Նոյն իսկ այն դէպքում, երբ, ընդունենք, քահանան մտադիր չէ գործնական օգնութիւն հասցնել յուզուող մտքերին՝ օրինակ մասնակցելով կրեդիտային ընկերակցութիւններ կամ բանուորական կազմակերպութիւններ հիմնող ձեռնարկութիւնների,—բայց և այնպէս նա կարող է ներքին, հոգեկան կապ պահպանել իր համայնքի հետ միմիայն այն դէպքում, երբ նա իրօք տեղեակ լինի, թէ իր համայնքին նիւթական ճնշում պատճառողն ինչ բան է, այսինքն՝ երբ նա կարողանայ դիտել և նկատել այն բոլոր յարակից պատճառներն ու երևոյթները, որոնց միջոցով միայն կարելի կլինի պարզել այս կամ այն համայնքի ընդհանուր վիճակը։

ԻՐԱՒԱՆԸ

Նախկին ժամանակներում իրաւագիտութեան ուսուցումը բաժանւում էր երկու մասի. 1. զուտ իրաւագիտական բաժին, և 2. կամերալիայի բաժին։ Վերջինս աւանդւում էր յատկապէս այն ուսանողներին, որոնք նախապատրաստւում էին, ինչպէս ընդունուած էր արտայայտել, պաշտօնեաներ դառնալու համար։ Այն ժամանակ իշխում էր այն հայեացքը, թէ միայն վերջինների համար անհրաժեշտ է քաղաքատնտեսութիւն ուսումնասիրել, կամ, աւելի ճիշտն ասած, այդ մասնագիտութեան դասախօսութիւններին «գլխուել» (belegen)։ Այն ինչ պրոֆեսիոնալ իրաւաբանի համար աւելորդ բեռն էր սեպւում տնտեսագիտութեան ուսումնասիրութիւնը։ Սակայն մեր օրերում իրեն համար աւելի ու աւելի ուղի է հարթում այն հասկացողութիւնը, թէ ամէն մի իրաւաբան—ինչ ասպարիզի վրայ իսկ տարածելու լինի նա իր գործունէութիւնը,—առանց տնտեսագիտական պատրաստութեան հնարաւորութիւն չի ունենալ իր գործն անթերի կատարելու։ Ընկրսած այն ժամանակից, երբ քրէական իրաւունքի ուսումնասիրութեան առարկայ է դարձել այլ ևս ոչ թէ յանցագործութիւնը, այլ յանցագործի անձը, ինքնին հասկանալի է դարձել և այն հանգամանքը, որ ամենից առաջ նա է պարտաւոր ուսումնասիրել յան-

ցագործ անհատների սոցիալական պայմանները, որն իբրև պաշտպան-փաստաբան կամ դատաւոր կոչուած է զբաղուելու այլազան յանցագործութիւնների քննութեամբ։ Իսկ սոցիալական պայմաններ ասելով իսկապէս պիտի ընդունենք տնտեսական պայմաններ։ Ուստի և միմիայն այն դատախազը կամ փաստաբանը կարող է յանցագործութեան վերաբերմամբ ճշգրիտ հայեացք կազմել, որն յիրաւի անթերի ուսումնասիրել է այն տնտեսական միջավայրը, որի ծնունդ է յանցագործ-անհատը։ Եթէ ընդունելի է այս ըմբռնումն ընդհանրապէս առած, ապա աչքի է զարնում նա իր մասնակի պարզութեամբ՝ երբ մենք յանցագործութիւնների առանձին և տարբեր կատեգորիաներն ենք ի նկատի առնում։ Այս ասելով ես ի նկատի ունիմ այն տեսակ յանցագործութիւնները, որոնք աւելի ու աւելի աճող թուով ծնունդ են առնում տնտեսական տարբեր խմբակցութիւնների տարբեր շահերի յարայոյզ կռուից։

Արդ, ի՞նչ կարող է անել տնտեսագիտական ծանօթութիւններից զուրկ դատաւորը կամ դատախազը և կամ փաստաբանը, երբ դատաքննութեան առարկայ դառնան այնպիսի յանցագործութիւններ, որոնք անբա-

րեխեղճ մրցութեան (unlauterer Wettbewerb) շարքին են պատկանում, և կամ երբ քննւում է մի յանցանք, որ գործել են բանուորներ՝ գործադրութիւն տալով կոալիցիայի իրաւունքին (Koalitionsrecht)։ Նոյն իսկ մեր բարձրագոյն դատարաններում գործադուլի, նաև գործաթողների՝ աշխատել ցանկացող բանուորների դէմ ծագեցրած արդելարգիլ հանգամանքների և նման հարցերի վերաբերմամբ կայացուող ապշեցուցիչ, անգամ անըմբռնելի դատավճիռների մեծագոյն բաժինը հասկանալի կդառնայ միմիայն այն դէպքում, երբ մենք ընդունենք, որ յիշած դատավարական շրջաններում իսպառ բացակայում է սոցիալական կեանքի այն երևոյթների անհրաժեշտ ծանօթութիւնը, որոնք մէկին դէպի յանցագործութիւն են մղում։ Բայց նաև քաղաքացիական իրաւունքով զբաղուող մասնագէտի համար ամեն մի քայլափոխի վրայ յարուցւում են այնպիսի հարցեր, որոնք առանց տնտեսական պայմանների ծանօթութեան դժուարլուծանելի են և կամ բնաւ անլուծանելի։ Սորա համար ի նկատի առնենք օրինակ բորսային առևտրից ծագած անախորժութիւնները, ընդհանուր առևտրական—իրաւական կոնֆլիկտները, շինարարա-

կան արհեստաւորների՝ իրենց հարստահարող-կապալառուին առաջադրած պահանջները, և կամ բնակարանային իրաւունքի, գրաւի, օրավարձի պայմանագրութեան ամբողջական կազմը և այլն։

ԲԺԻՇԿ.

Մեր օրերում խօսք է լինում արդէն «սոցիալական բժշկագիտութեան» (soziale Medizin) մասին. նոյն իսկ լոյս է տեսել մի ձեռնարկ սոցիալական բժշկագիտութեան։ Հենց այս հանգամանքը լաւագոյն ապացոյցն է այն բանի, որ նաև բժիշկները սերտօրէն գիտակից են հասարակական կեանքին ընդհանրապէս և տնտեսական կեանքին՝ մասնաւորապէս։ Ըստ ամենայնի նաև բժշկագիտութեան է վերաբերում այն հայեցակէտը, ինչ իրաւագիտութեան համար յիշուեցաւ,— այն է, որ հիւանդութեան առանձին դէպքերը պիտի քննութեան առնել ոչ թէ իբրև ժամանակի—եղական երևոյթներ, այլ իբրև արտաքին պայմանների պատճառականութեան հետեւանքներ։ Մեր օրերում բժիշկներն անխուսափելիօրէն ուշադրութեան պիտի առնեն նաև ազգաբնակութեան մնունդի, բնակարանի և աշխատանքի պայմանները, երբ նոքա ձգտում են որ և է հիւանդութեան ծագումն ըմբռնել, կամ երբ նոքա ջանք են թափում ու միջոցներ ձեռք առնում սպառնացող հիւանդութիւնների դէմ՝ սոցա անվրտանգ դարձնելու համար։ Բժիշկներին քաջ յայտնի է, որ ազգաբնակութեան ամենաչքաւոր խաւերի զաւակ ցաւագար տնայնագործին այլ վերաբերմունք, այլ բժշկական հոգատարութիւն պէտք է ցոյց տալ, իսկ բարձր շրջանների անդամ և փարթամակեցութեան շնորհիւ զերացած բուրժուայ մարդուն՝ այլ։ Նոցա լաւ յայտնի պիտի լինի—եթէ նոքա լուրջ վերաբերմունք ցոյց տալ կամենան իրենց մասնագիտութեան,—որ շատ յաճախ անհրաժեշտ է նախօրէն ծանօթանալ պացիենտի ապրուստի պայմանների հետ և ապա թէ նորա ապաքինումին անցնել։

Սակայն կան նաև շատ ուրիշ մասնաւոր դրդապատճառներ, որոնք մեր օրերում բժշկին սերտ յարաբերութեան մէջ են դնում տնտեսական կեանքի երևոյթների հետ։ Այս ասելով ես ի նկատի ունիմ պետութեան և ընկերակցութիւնների ձեռքով հիմնուած այնպիսի կազմակերպութիւններ, որոնք օրէցօր բարձրացող նշանակութիւն են ստա-

նում մեր հասարակական կեանքում՝ ունենալով հիւանդ և ինուալիդ մարդկանց խնամելու նպատակ. այսպէս են՝ հիւանդների դրամարկղներ (Krankenкassen), համարուեստ ընկերակցութիւններ (Berufsgenossenschaften) և այլն, որոնց մէջ բժիշկներն անմիջապէս կամ միջնորդապէս հետզհետէ աւելի մեծ գործակցութիւն են ձեռք բերում։

Նաև բժշկի անձնական դիրքի ապահովութեան տեսակէտից աւելի ու աւելի զգալի է դառնում պարզել տնտեսական պատճառականութեան հարցը. երբ նա, օրինակ, տեսնում է, թէ ինչպէս մէկ կողմից իր պաշտօնակիցների մէջ գոյանում է մտաւոր պրոլետարիատ, իսկ միւս կողմից սակաւաթիւ խոշոր կապիտալիստ բժիշկներ դառնում են հիւանդների շուկայի (Krankenmarkt) տէր։

Ինչ վերաբերում է այլ համալսարանական մասնագէտ մարդկանց՝ նոքա, իրենց մասնագիտութեան տեսակին նայելով, աւելի տեսական-գիտական հիմունքներով են զբաղուում տնտեսագիտական պրոբլեմներով։ Ես դեռ առիթ կունենամ այս հարցին վերադառնալու։ Սակայն կայ նաև խոշոր թիւ այնպիսի ակադեմիկների—հաշուի չառած դեռ նոցա, որոնք քաղաքատնտեսութիւնն իրենց

գլխաւոր մասնագիտութիւն են դարձրել,—որոնք շփումի մէջ են դրուում տնտեսական կեանքի երևոյթների հետ։ Ի նկատի առնենք օրինակ այն քիմիկոսներին, որոնք պաշտօնավարում են որ և է մեծ գործարանում։

Սակայն տնտեսագիտական և սոցիալ-քաղաքական պրոբլեմներով զբաղուելու անհրաժեշտութիւնը գտնում ենք մենք ոչ միայն համալսարանական շրջաններում, այլ և մասամբ դոցանից դուրս։ Սոցիալիզմում ամէնից առաջ հանդէս է գալիս

ԱՐԴԻՒՆԱՎԱՃԱՌԸ

Թող նա լինի գիւղատնտես, գործարանատէր կամ վաճառական,—այդ միևնոյնն է. եթէ նա իր ձեռնարկութիւնը յաջողութեամբ վարել է ցանկանում՝ նորա համար մեր ժամանակում անխուսափելի պահանջ է թէկուզ սակաւ տեղեկութիւն ունենալ շուկայի վիճակի մասին, իր ձեռնարկութեան և այլ ձեռնարկութիւնների մէջ եղած փոխադարձ յարաբերութեան մասին։ Հենց իր, արդիւնավաճառի, ստացած առևտրական թերթի կամ ո և է այլ մասնագիտական հանդէսի լոկ ընթերցումն ինքնին կտիպէ նորան ա-

ւելի շրջահայեաց լինել, քան թոյլ են տալիս նորան իր գրասենեակի որմերը։

Արդիւնավաճառ մարդը կարիք կունենայ տնտեսական և սոցիալական հանրատարած երևոյթների հետազօտութեամբ զբաղուելու մանաւանդ այն դէպքում, երբ նորա գործը վարձաբանուորի (վարձագնով աշխատող, Lohnarbeiter) հետ է։ Յաճախակի և պարբերաբար հրատարակւում են սոցիալ-քաղաքական օրէնքներ, որոնք աշխատանքի պայմաններն այսպէս կամ այնպէս նոր կարգերի են ենթարկում։ Մի դէպքում նոր օրէնքը վերաբերում է հիւանդների ապահովագրութեան ծաւալելուն, միւս դէպքում՝ դժբախտ դիպուածների միջոցին բանուորին պաշտպանութիւն ցոյց տուող կանոնադրութիւններին, երրորդ դէպքում՝ կանանց աշխատանքին վերաբերող կանոններին, չորրորդ դէպքում՝ կիրակնօրեայ հանգստին, և այլն։ Իւրաքանչիւր դէպքում արդիւնավաճառի առաջին իսկ պարտքն է նոր օրէնքների և կանոնների էութեան իրազեկ դառնալ։ Սակայն հենց այսպէս իսկ վարուելու համար արդիւնավաճառը կարիք կունենայ աւելի՛ ընդարձակելու իր ընդհանուր սոցիալ-քաղաքական ծանօթութիւնները, — եթէ նա յիրաւի

ձգտում է իւրաքանչիւր մասնակի երևոյթ ճշգրտօրէն ըմբռնել։

Կայ և այն հանգամանքը, որ արդիւնագործը որոշ դիրք ունի բռնելու իր բանուորների և սոցա վերաբերող կարգադրութիւնների հանդէպ։ Ու այս հանգամանքն անհրաժեշտօրէն կստիպէ նորան աւելի՛ լայն հայեացք ձեռք բերել օրուայ անցքերի վերաբերմամբ։ Եթէ արդիւնավաճառը ցանկանում է որոշ հայեացակէտ ունենալ գործակատարների կամ բանուորների պահանջների մասին, ապա և պարտաւոր պիտի լինի նա անգիտակ չլինել, թէ ո՞րտեղից են ծագել այն պահանջներն և ինչ բանի են ձգտում նոքա։

Արդիւնագործը պարտաւոր է ծանօթութիւն ունենալ բանուորական կազմակերպութիւնների մասին, — եթէ նա չէ ցանկանում, անգիտութիւնից, իրականութեան մէջ սխալ քայլեր անելու վտանգին ենթարկուիլ։ Նա գաղափար պիտի ունենայ հաշտարար պաշտօնատների, արդիւնագործական դատարանների մասին, ըստ որում սոցա՛ պիտի դիմէ նա իր բանուորների հետ ունենալիք կոնֆլիկտների դէպքում։ Արդիւնագործի համար պարզ պիտի լինի գործատէրերի միութիւնների (Arbeitgeber — Verbände) օգտաւէտու-

թիւնը սեփական շահերի տեսակէտից, երբ նորան իր համագործակիցների կողմից դիմում և առաջարկութիւն լինի մասնակցելու յիշած միութիւններին։

Գործատուների և գործատուների (Arbeitnehmer) հակընդդէմ շահերից ծագող պրոբլեմներն են, որոնք ստիպողական են դարձնում այն, որ «սոցիալական հարցով» զբաղուին նաև

ԲՈԼՈՐ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

(գործակատարները, բանուորները, եւ այլն).

Սեփական կազմակերպութիւնները, սեփական իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները, որոնք ծագում են առնում սոցիալական օրէնսդրութիւնից (Soziale Gesetzgebung), հանդիսանում են նմանապէս իրրև դրդապատճառներ այն բանի, որ վերոյիշեալները խորհրդածութեան առարկայ դարձնեն իրենց արդիւնագործութեան և իրենց դասակարգի վիճակը։

Նաև

ԿԱՆԱՅՔ

Ունենում են օրէցօր աւելի դրդապատճառներ սոցիալական կեանքի երևոյթներով զբաղուելու։ Այն, ինչ մենք «կանանց հարց» ենք անուանում ամենաընդհանուր մտքով, հնարաւոր չէ հիմնաւորապէս հասկանալ առանց ի նկատի առնելու տնտեսական մոմենտներ։ Ու այն կինը, որն սկսում է խորհրդածութեան առարկայ դարձնել իր վիճակը, ստիպողաբար պիտի դիմէ սոցիալական հարցերի ուսումնասիրութեան։ Այսպէս պիտի վարուէ կինն և՛ այն դէպքում, երբ բանը քաղաքացիական կանանց հարցին (die bürgerliche Frauenfrage) է վերաբերում, — որ ծագել է քաղաքացիական շրջաններում կընոջ համար չափազանց սակաւ աշխատանք լինելուց, և՛ այն դէպքում, երբ խորհրդածութեան առարկայ է պրոլետար կանանց հարցը (die proletarische Frauenfrage), — որի առաջանալու հիմնական պատճառը վարձաբանուորուհու (Lohnarbeterin) չափազանց շատ աշխատանքի տակ ընկնումն է։

Հենց ինքնին հասկանալի է նաև, որ քաղաքագէտները, ժուրնալիստները և վեր-

15864-57

Չապէս բոլոր լրագրակարդացողները ներկայումս անհնարին է, որ կարողանան դիրք պահպանել առանց տնտեսական և սոցիալական յարաբերութիւնների ծանօթութեան։ Ըստ ամենայնի անհնար բան է ըմբռնել անգամ ոևէ թերթի կարևորագոյն բաժինները՝ առանց գէթ սակաւ ծանօթութեան հարկային սիստեմի, առևտրական և մաքսային քաղաքականութեան, բանուորական շարժումի և նմանատեսակ երևոյթների մասին։

* * *

II.

Եթէ հարցնելու լինինք՝ թէ որոնք են մեր ժամանակին յատուկ այն իրողութեան հիմնապատճառները, որ տնտեսական և սոցիալ-քաղաքական պրոբլեմներն անդադար զբաղեցնում են ամեն մի քաղաքացու գլուխ, —այն ժամանակ դժուար չի լինիլ տալ նաև պատասխան։

Այդ հիմնապատճառներն են.

1. Ազգաբնակութեան արագ բազմանալու շնորհիւ 19-րդ դարի ընթացքում եւրոպական պետութիւնների բնակիչների թիւն աւելի քան կրկնապատկուել է,—տնտեսական գոյութեան կռիւն աւելի դաժան և աւելի ինտենսիւ կերպարանք է ստացել մեր ժամանակներում։ Իւրաքանչիւր անհատ այժմ աւելի մեծ անհրաժեշտութիւն ունէ դիրք ստեղծելու, լուսնի տակ իրեն համար գլուխ դնելու տեղ ձեռք բերելու, քան մէկ դար կամ նոյն իսկ մէկ-երկու սերունդ առաջ։ Այս այսպէս է՝ թէ տարբեր ազգութիւնների մրցումն ամբողջ երկրագնդի վրայ ի նկատի առնելով, և թէ սահմանափակ հասարակութեան շրջաններում՝ անհատների մղած գոյութեան կռիւը դիտելով։ Բնակավայրի համար մղուող կռիւն այժմ նոյնչափ սուր բնաւորութիւն է ստացել, որչափ մնունդի համար մղուող կռիւը։ Անցեալում ազգերը կռիւ են մղել իրար դէմ երկրագնդի վրայ աւելի մեծ տարածութիւններ գրաւելու համար։ 16-րդ, 17-րդ և 18-րդ դարերը լի են առևտրական և կոլոնիական պատերազմներով։ Իսկ մեր դարի յատկանիշն այն է, որ կռուի տեսակն է փոխուել, որ մեր օրերում այլ ևս ոչ թէ զէնքի բրուտալ ոյժն է յաղթանակ տանողը, այլ տնտեսական կռուի յա-

ջողակ վարումը։ Ու այս իսկ պատճառով միջազգային մրցումի մէջ բնականաբար տընտեսական մոմենտն է մեծագոյն նշանակութիւն ստացողը։

Իսկ առանձին-առանձին համայնքների ներքին սահմաններում կռիւը հացի համար առաւել ընդարձակ ծաւալ է ստացել մանաւանդ նորագոյն ժամանակներում. ու այս այն չափով, որ չափով որ ժողովուրդն է աճել-բազմացել։ Յիշատակենք այսպէս կոչուած ազատ արուեստների սահմաններում իշխող մեծ կարիքը, մտաւոր պրոլետարիատի աճումը։ Ի միտ առնենք նաև առևտրական աշխարհում մղուող մրցութեան կռիւը, թէ ինչպէս այստեղ ծայրագոյն ագահութեամբ մէկը միւսին տապալել է ջանում։ Դիտեցէք նաև, թէ որչափ մեծ է խնդրատուների թիւը ոևէ ազատ դարձած պաշտօնի համար։

2. Սակայն անհատների վրայ ծանրացող այս զուտ քանակական յարաճուն ճընշումը հարկաւ բաւ չէր լինիլ մեկնելու համար տնտեսական և հասարակական կեանքի վերաբերմամբ իշխող նորատեսակ հայեացքը (այս տեսակ ճնշում վաղուց ի վեր նկատելի է Ասիայի չափազանց խիտ բնակուած երկրներում, սակայն և այնպէս այնտեղ զարթնած չէ և ոչ մի հետաքրքրութիւն տնտեսական հարցերի վերաբերմամբ), եթէ այդ ճնշող վիճակին միաժամանակ չընթացակցեր նաև կեանքի պայմանների վերափոխութիւն, ուրիշ խօսքով՝ վիճակի որակական փոփոխութիւն։ Յայտնի է, որ կապիտալիզմն է առաջացրել կեանքի սոյնսման վերափոխութիւն և յեղաշրջում, այն ևս այնպիսի հիմնական վերափոխութիւն, որ միանգամայն անծանօթ է եղել անցած ժամանակներին. միւս կողմից էլ այնպիսի արագ և անկարծ վերափոխութիւն, որպիսին նմանապէս անցած պատմական շրջաններում դիտուած չէ եղել։ Այն, ինչ կառուցուել էր դարերի և տասնեակ դարերի աշխատանքով՝ մի քանի տասնեակ տարում աւերակ դարձաւ։ Ինչպէս որ ծովի ալիքների մէջ դարերի ընթացքում գոյացած ժայռը բոպէական երկրաշարժի հարուածից փշուր-փշուր է դառնում, այսպէս է վարուել և կապիտալիզմը մեր յիշատակելի ժամանակում նախկին սերունդների կառուցած սրբազան հաստատութիւնների հետ։

Հասարակութեան ներքին կազմի մէջ հին դասակարգերն իրենց նախկին իրաւական սահմաններում վտանգի են մատնուած —եթէ չասենք թէ սոքա արդէն իսկ ան-

յայտացել են։ Հին ազնուականութիւնն ա-
կանատես է, թէ ինչպէս նա կորցնում է իր
ոտքի տակի հողը։ Սոյն վիճակին է ենթար-
կուած նաև արհեստաւորների և մանր առևտ-
րականների՝ հին դոյնի փոքր քաղաքացի-
ական դասակարգը։ Նոցա տեղը գրաւում է
այժմ այն դասակարգը, որը հանդիսանում է
կապիտալիզմի սկզբնաւորութեան և ծաղկու-
մի ռահվիրան—բուրժուազիան։ Սակայն բանն
այն է, որ այս դասակարգը բնաւ հնարա-
ւորութիւն չունէ ինքնիրեն նոյնչափ ապա-
հով և անդորր զգալու, որչափ դարեր շա-
ռունակ այն դասակարգերը, որոնց բուր-
ժուազիան վանել է իրենց դիրքից։ Ո՛չ, այս
դասակարգին շնորհուած չէ մի վայրկեան
անգամ իր յաղթանակով ցնծալու. ըստ ո-
րում այդ դասակարգի յետևից տարածւում
է մի այնպիսի ծաւալուն ստուեր, որ խա-
ւար է դարձնում երկիրն այնտեղ, ուր նա է
տարածւում. ու այդ է՝ սեփականազուրկ պրո-
լետարիատ դասակարգը։ Այս դասակարգը
ձգտում է գրաւել բուրժուազիայի դեռ ոչ-
վաղուց ձեռք բերած ոյժն ու դիրքը։ Եւ ա-
հա այսպիսով ծագում է այն հակայական պրոբ-
լեմը, թէ օրպէս հնարաւոր է այս ահարկու
մասսաններին ձուլել ազգաբնակութեան նախ-

կին կուլտուր—համայնական դասակարգա-
յին կազմի մէջ, որպէս զի այդ ճանապար-
հով հին դասակարգերը ձեռնազուրկ չմնան
իրենց՝ տասնեակ դարերի ընթացքում իւ-
րացրած տիրապետութիւններից։

Ընտանիքը, նախկին դոյնի, որի վրայ էր
կառուցւում առաջ ամէն մի կուլտուրայ, ըսկ-
սում է հետզհետէ *կազմալուծուիլ*։ Հինաւուրց
գիւղական նահապետական ընտանիքն աւեր-
ւում է։ Կորցնում է նմանապէս քաղաքացիա-
կան ընտանիքն իր նշանակութիւնն իբրև կրող
կարեւորագոյն տնտեսական ֆունկցիաների։
Ընտանիքն այլ ևս չէ արդիւնագործում ինչ-
պէս առաջ,—երբ ընտանիքի բազմաթիւ ան-
դամները հաց էին թխում, գարեջուր պատ-
րաստում, սապոն եփում, մսացու տաւար
մորթում, կտաւ գործում, բուրդ զգում, թել
մանում ու գործուածքներ անում։ Եւ հենց
այս իսկ հանգամանքը հիմնովին կերպարա-
նափոխ է անում կնոջ դիրքը տնտեսական
կեանքի և հասարակութեան օրգանիզմի մէջ։
Կինն այժմ ապրուստի միջոցներ է վաստա-
կում ոչ այլևս տան պատերի մէջ իր ձեռա-
գործական աշխատանքով, ինչպէս որ էր նախ-
կին ժամանակներում։ Ցնային վաստակից
կտրուելով՝ կինը մնում է նախ գործազուրկ

և, այդպիսով, հանդիսանում է իբրև ծանր բեռ. և ապա թէ ժամանակ անցնելուց յետոյ նա հազիւ կարող կլինի իր տնային աշխատանքների փոխարէն գտնել ուրիշ վաստակ՝ այլուր, տանից դուրս։ Սակայն ոչէ վաստակ կարող է գտնել կինը միայն շուկայում, այն էլ մրցելով տղամարդու հետ, որին նա, կինը, մրցումային կռուի մէջ սովորաբար յաղթահարում է (պատճառ որ նա աւելի նուազ պահանջներ ունէ) և հենց այդպիսով էլ նա անընդունակ է դարձնում տղամարդուն ընտանիք կերակրելու։

Ընդ սմին ժամանակակից կուլտուրական պետութիւնների մէջ նկատելի է ազգաբնակութեան տարածական վերաբնակութիւնը։ Խոշոր ինդուստրիան կուտակում է ազգաբնակութիւնը սակաւաթիւ վայրերում և տնտեսական առաջադիմութեան ամբողջական ինքնորակութիւնը (Eigenart) տանում է դէպի քաղաքի մեծանալը և գիւղի անկումը։ Մինչ մէկ դար առաջ Գերմանիայի ազգաբնակութեան հազիւ մէկ քառորդը քաղաքաբնակ էր, այժմ՝ աւելի քան կէսը։ Եւ ինչ քաղաքներ։ Մեծ քաղաքը (Grosstadt), ներկայիս ըմբռնումով, ծագել է միայն վերջին դարում։ 50,000-ից աւելի բնակիչ ունեցող

գերմանական քաղաքներում 19-րդ դարի կէսերին (1843 թ.) ապրում էր միայն 1,229,681 հոգի կամ 3,5% ամբողջ ազգաբնակութեան. այնինչ դարի վերջին (1900 թ.) արդէն 11,861,924 հոգի կամ 21,9% ամբողջ ազգաբնակութեան։ 100,000-ից աւելի բնակիչ ունեցող քաղաքներում 1871 թուականին ապրում էին 2 միլիոնից պակաս մարդիկ (5,34% ամբողջ ազգաբնակութեան), իսկ այժմ՝ 10 միլիոն (1900-ին՝ 9,2 միլիոն կամ 16,36% ամբողջ ազգաբնակութեան)։

Կրկնենք։ Հենց այս թուերից մէկով անգամ որպիսի հիմնական կերպարանափոխութիւն է արտայայտւում կեանքի բոլոր պայմաններում։ Ու այս կերպարանափոխութեան շնորհիւ ծագում է մի ուրիշ մեծ պրոբլեմ, —թէ որպէս հնարաւոր դարձնել այդ հրակայական մասսաների համար մի տանելի կուլտուրական կեանք։ Այս պրոբլեմն է, որ իր կողմից դնում է մեր առջև մեծ քաղաքի հաղորդակցական քաղաքականութեան, մեծ քաղաքի հարկային, սոցիալական քաղաքականութեան հարցերն իրենց հաղարատեսակ պահանջներով։

Հիմնական կերպարանափոխութեան են ենթարկուել նաև աշխատանքի բոլոր պայ-

մանները։ Այնտեղ, ուր առաջ շինականն Աստուծոյ ազատ բնութեան մէջ արօրի մաճն էր բռնում, ուր առաջ արհեստաւորն էր տրքնում իր գործիքներով, այնտեղ այժմ աշտարակաւոր հսկայ գործարանն է բարձրացած, որն իր որմերի մէջ ամբողջ օրով և յաճախ նաև ամբողջ գիշերով բանուորական մասաններ է պարփակում ու այդպիսով անառողջ, ապականուած և հեղձուցիչ մթնոլորտում աշխատաւորին արիւնքամանում։ Իսկ նախկին փոքր քաղաքների մանր խանութների տեղը բռնել են այժմ հսկայական վաճառատներ, ուր հազարաւոր գործակատարներ ամենախիստ կարգերի հետևելով անգիտակցօրէն իրենց բաժին աշխատանքն են կատարում։

Նախկին պողոտաների փոխարէն, ուր առաջ աւադի միջով պոստային կառքն էր ընթանում, այժմ երկաթէ և էլեկտրական ուղիներն են տարածւում։ Հարիւր տարի առաջ Գերմանիայում ճանապարհորդող պաստաժիրների թիւը, տարուայ ընթացքում, մէկ միլիոնի չէր հասնում. իսկ այժմ՝ շատ աւելի քան հազար միլիոն։

Իմ աւելի խոշոր երկերի *) մէջ ես փորձել եմ աւելի մանրամասն ուսումնասիրութեան ենթարկել այս համատարած կերպանափոխութիւնը, որն ես այստեղ միայն համառօտակի ուրուագծեցի։

Կուզէի յիշատակել նաև այն հանգամանքը, որ նման անհատական կեանքի պայմանների վերափոխութեան՝ հասարակութեան մէջ նաև հիմնովին փոփոխուել են ազգերի իրար հետ ունեցած յարաբերութիւնները։ Վերջին տասնամեակներում բացուել են ըստ ամենայնի նոր, լայն ասպարէզներ հին ազգերի տնտեսական մրցումի համար և այդպիսով դրոշմել են համաշխարհային առևտրական յարաբերութիւնների վրայ ըստ ամենայնի նոր կնիք։ Այս տեսակէտից վերջին տասնամեակների կարևորագոյն իրողութիւնն այն է, որ դաղթային պտղաբեր հողերը մերձեցուել են Արևմտեան Եւրոպայի շուկաներին. իսկ այս հետևանք է հաղորդակցութեան միջոցների կատարելագործութեան և սոցանով հնարաւոր դարձրած դաղթականութեան և բնակութեան նորագիւտ

*) «Der moderne Kapitalismus, 2 հատոր. Լայպցիգ, 1902 և «Die deutsche Volkswirtschaft im neunzehnten Jahrhundert» Բերլին, 1903.

երկիրների վրայ։ Յայտնի է, որ այս հանգամանքի շնորհիւ Արևմտեան Եւրոպայի գիւղական տնտեսութիւնը ծայրայեղ կարիքի մէջ է նետուել և սարսափած է եղել յաճախ իրեն համար նորանոր ուղիներ հարթել, որպէսզի կարող լինի ազատուիլ իր վտանգալից դիրքից։ Ուրեմն այս տեսակէտից էլ տեղի են ունեցել փլումներ, կերպարանափոխութիւններ և վերափոխութիւններ։

Սորան կից պէտք է ի նկատի առնել և այն, որ կապիտալիզմը ոչ միայն հազարաւոր դէպքերում փլցրել է հինն և նորա տեղը դրել, այլ և այն, որ նա տնտեսական գործառնութեան եւ այդպիսով սոցիալական կեանքի ամբողջական ընոյթը հիմնովին կերպարանափոխել է։

* * *

III.

Հասարակական կեանքը մեր օրերում պրոբլեմատիկ կերպարանք է ստացել։ Այն, ինչ առաջ ինքնին հասկանալի էր համարւում, այժմ դարձել է հոգսի և մտատանջութեան ու, այդպիսով էլ, բնականաբար, խոր-

հրդածութեան առարկայ։ Մեկնութեան կարօտ չէ այն, որ հանապազորդ մեզ ճնշող կարիքներն ու յոյսերը մեր առջև դնում են այս հարցերը. ուրտեղից են ծագում դոքա և արդեօք միթէ անխուսափելի են դոքա. չըկա՞յ մի ելք ներկայ վիճակից ազատուելու համար։ Ու այս հարցերը խորհրդածութեան առարկայ են դառնում նախ շահագրգռուած և ապա կողմնակի անձերի համար։ Այսպիսով էլ աւելի ու աւելի զարթնում է հետաքրքրութիւն նախ դէպի գործնական, և ապա նաև գիտական հետազօտութիւն սոցիալ-քաղաքական պրոբլեմների։ Այս հետաքրքրութիւնը ծագեց նախ գործնական պահանջից, սակայն արագօրէն անցաւ և նորա սահմաններից դուրս։ Ցարգի գարձաւ մեր ժամանակում մի հայեցակէտ, որն օրուայ հոգսերից շատ աւելի մեծ չափով հիմնաւորապէս նպաստեց սոցիալական գիտութիւնների ուսումնասիրութեան նշանակութիւնը հաստատուն դարձնելուն։

Կապիտալիզմի՝ մեր հոգեկան կեանքում առաջացրած կարևորագոյն հետևանքներից մէկն էլ այն է, որ նա մեզ գիտակից դարձրեց այն հսկայական նշանակութեան, որ ունէ տնտեսական մոմենտը մեր հասայն կուլ-

տուրական կեանքի սահմաններում։ Երկու ճանապարհով մեր հոգու մէջ մուտք գործեց այս հասկացողութիւնը. դիտելով մէկ կողմից տնտեսական շահերի ոյժը, իսկ միւս կողմից՝ բոլոր քաղաքական, կուլտուրական և մտաւոր առաջադիմութեան կախումը տընտեսական պայմաններից։

Անգամ կոյր մարդու համար վերջապէս պիտի պարզուէ այն ճշմարտութիւնը, որ հեռատես սոցիալիստներն արդէն կէս դար առաջ ճանաչել և յայտնել են,—թէ մենք բոլորս և՛ հասարակական և՛ անհատական կեանքում միայն և միայն կապիտալիստների ծափով ենք պարում։ Կապիտալիստական շահերն ստեղծեցին այնպիսի օրէնքներ և բարքեր, որոնք ամենից յարմարն էին իրենց ծաւալումի համար. և միայն հակընդդէմ շահերի զօրեղ դիմադրութիւնն էր, որ կարող եղաւ մարդկութիւնը գոնէ վատթարագոյն աւերումներից ազատ պահել, որոնց այլապէս կառաջացնէր կապիտալիզմն անխափան։

Թէ որչափ սերտօրէն է հանգչում մեր համայն կուլտուրական կեանքը տնտեսական հիմքերի վրայ, այդ պիտի պարզօրէն յայտնագործուէր մեր ժամանակում, երբ, ինչպէս տեսանք, այս հիմքերն իրենք յանկարծօրէն

կերպարանափոխուեցան։ Այսպիսով ուրեմն մեր կուլտուրական կեանքում տեղի ունեցող փոփոխութիւնները դիւրաբար մեկնաբանւում են իբրև տնտեսական կեանքում առաջացած փոփոխութիւնների հետևանքներ։ Ես կյիշատակեմ տնտեսական և հոգեկան կուլտուրայի մէջ եղած միայն մի քանի սերտ առնչութիւններ, որոնք առանձնապէս յրատակ և մեկին կերևան մեզ, երբ մենք վերջին հարիւրամեակի տնտեսական յեղափոխութիւնը մեր հոգևոր աչքի առջև պատկերացնենք։

Բազմացող ազգաբնակութիւնն և աճող հարստութիւնը հնարաւոր դարձրին նախ կուլտուրական բազիսի մի այնպիսի ծաւալում, որպիսին նախկին դարերից և ոչ մէկին յատուկ եղած է։ Այսպիսով՝ կուլտուրական զարգացումը ձեռք բերեց մի անասելի ոյժ։ Միմիայն հարուստ ազգեր, որպիսին դարձան Եւրոպական ժողովուրդները վերջին դարերի ընթացքում, հնար ունին ապահովելու այն բոլոր գիտնականներին, գեղարուեստագէտներին, բանաստեղծներին, երաժիշտներին,—որոնք իրենց մտաւոր բազմազան արտադրութիւններով այսօր մեզ հիացմունք են պատճառում։ Եւ յիրաւի։ Մեր ժամանակում հրս-

կայական է գրական և գեղարուեստական երկերի աճումը։ Համեմատութեան առնենք հենց մեր օրերում լոյս տեսնող գրքերի քանակը նախկին ժամանակներում լոյս տեսածների հետ։ 19-րդ դարի սկզբին Գերմանիայում մէկ տարուայ ընթացքում նոր լոյս տեսնող գրքերի թիւը հասնում էր 3—4,000-ի, իսկ այսօր՝ աւելի քան 25,000-ի։ Եւ եթէ այն ևս ի նկատի առնենք, որ 100 տարի առաջ իւրաքանչիւր տպագրութիւն բաղկացած էր լինում 500 օրինակից, իսկ այժմ 1000 օրինակից, ապա կպարզուէ և այն, որ դարի սկզբին իւրաքանչիւր 16 բնակչին ընկնում էր մէկ նոր տպագրուած գիրք, իսկ այժմ արդէն իւրաքանչիւր 2 բնակչին մէկ նոր տպագրուած գիրք։ Ապա ի նկատի առնենք և այն, որ գրական և գեղարուեստական երկերի աճումի հետ զուգընթացաբար էժանանում են և սոքա։ 10, 20, 25, 50 ֆենինգանոց (1 ֆ.=1/2 կոպ.) հրատարակութիւնները, կլասսիկների էժանագին ժողովածուները պարզ ապացոյց են այս բանի, որպէս և մեր ժամանակում նկարների անդադար կատարելագործուող և էժանացող վերարտադրութիւնները։ Լուսանկարչական, ֆոտոգրաւիւրական, հելիոգրաւիւրական և

նման արուեստները, ժամանակակից տեխնիկայի այս տիրապետութիւնները, սոքա բոլորը հնարաւոր են դարձնում այժմ ամենաչքաւոր ընտանիքի համար անգամ ձեռք բերել էժան գնով (և երբեմն նաև լաւ) վերարտադրութիւններ ամենատեսակ գեղարուեստական երկերի։

Խորհել պարտենք և այն, որ մեր ժամանակը մասսային արդիւնագործութեան հետ միաժամանակ զարգացրել է նաև կրթութեան մասսային ծաւալումի մեթոդները։ Հարկ է սորա համար ի նկատի առնել միմիայն լրագրութիւնը,—ժամանակակից տնտեսութեան և տեխնիկայի հարազատ զաւակին։ Այլապէս հնարաւոր կլինէր այն՝ առանց դարագլուխ կազմող այնպիսի գիւտերի, ինչպէս են անծայր թղթի, ռոտացիոնական մամուլի, երկաթուղու, հեռագրի և հեռախօսի գիւտերը։ 1824 թուականին Պրուսիայում հրատարակւում էին միմիայն 845 լրագիրներ, այն ևս, անշուշտ, սակաւաթիւ օրինակներ տարածուելով, իսկ 19-րդ դարի վերջին Գերմանիայում մէկ և կէս միլիարդ լրագրական համարներ են պոստին յանձնւում։

Ցնտեսական կեանքի ձևափոխութիւններն իրենց ինքնատեսակ կնիքն են դրոշ-

մել նաև մեր ներքին կուլտուրայի էական գծերի վրայ։ Ես իմ «Գերմանական ազգային տնտեսութիւնը 19-րդ դարում» (Deutsche Volkswirtschaft im 19. Jahrhundert) աշխատասիրութեան մէջ փորձել եմ ցոյց տալ, թէ մեր ժամանակակից կեանքը բնորոշւում է գլխաւորապէս կոլեկտիւիզմի և շրջափոխութեան երևոյթներով, նաև, թէ որպէս այդ երկու երևոյթներն ևս պարզաբանւում են իրրև հետևանքներ ձևափոխուած տնտեսական կեանքի։ Ամենից առաջ նիւթական հարստութեան մեծաքանակ աճումն է, որ մեր կուլտուրայի վրայ իր կնիքն է դնում։ Մենք տէր ենք դարձել աշխարհային բարիքների այն չափով, որ անծանօթ է եղած մեզնից առաջ։ Սակայն այս իսկ հարստութիւնն է, որ մեզ դարձրել է ստրուկ մեր կարիքների։ Եթէ աճում են մեր կարիքները լցուցանող նիւթական բարիքները՝ միաժամանակ և առաւել չափով աճում են և սոյն կարիքներն իրենք։ Եղած մեծ հարստութիւնը ծնեցրել է նաև ցանկութիւն աւելին ձեռք բերելու։ Մարդկանց կուրծքը մուտք գործեց հետզհետէ աւելի զօրեղացող տենչանք դէպի արտաքին բարիքները։ Նիւթականի բարձր և չափազանց մեծ գնահատումն ընդհանուր դարձաւ և ծնունդ

առաւ թէ վերին և թէ ստորին խաւերում կարողութիւն դիզելու, հաճոյքն՝ բով յղփանալու ձգտումը։ Այսպիսով հարստութիւնն ինքն իրենից ծնունդ է տալիս այն հիմնական դրութեան, որին մենք սովոր ենք մատերիալիստական անունը տալ, և որը մանաւանդ մեր ժամանակին յատուկ է։

Ապա՝ նիւթական աճող հարստութիւնը հիմնովին փոխել է մեր յարաբերութիւնը կենդանի բնութեան հետ, մանաւորապէս այնտեղ, ուր այդունակ հարստութիւնն ինքը մըղել է մարդկանց դէպի համակեցութիւն քաղաքներում։ Այսպիսով առաջացել է մի նոր, արուեստական սերունդ՝ զուրկ բնական ոևէ զգացմունքից և սկիզբ է դրուել մի ըստ ամենայնի կուլտուրական նոր դարաշրջանի, որին ես զգայական-արուեստական կուլտուրայի դարաշրջան անունն եմ տալիս։

Իսկ իրրև հետևանք ազգաբնակութեան տեղական նոր կազմի, որի մասին, իրրև ժամանակակից տնտեսական կեանքի նշանաւոր երևոյթներից մէկը, վերը խօսք եղաւ, պիտի համարել առանձին երկիրների տեղականնախկին ինքնատիպ կուլտուրաների բարձումը,— թէ ներքուստ և թէ արտաքուստ։ Ազգային տարազներ ժողովրդական երգեր, առանձին հասարակութիւնների սրոշ բարքեր ու սովորոյթներ աւելի ու աւելի վերանում են և տեղի տալիս մեծ քաղաքներից ներմուծուող սովորութիւնների։ Օրինակ, կենտրոնական

քաղաքների պատրաստի հագուստեղէնի վաճառատները մեր օրերում գիւղացիների տրամադրութեան տակ են դնում զգեստի մոդաներ, իսկ մեծ քաղաքի սրճատնային կոնցերտատունները գիւղի փողոցներում հնչեցնում են իրենց յատուկ շանսոնետային երգերը։ Որոշ տեղի հետ կապուած և պինդարմատ կոնկրետ մարդու փոխարէն աւելի ու աւելի ասպարէզ է մտնում անարմատ, աբստրակտ համաշխարհաքաղաքացի մարդը։ Եւ թէ տնտեսական ֆակտորն ինչ չափով ուղղութիւն է տալիս մարդկային կեանքի ամբողջական կազմին,—այդ ակներև և պարզ է դառնում, երբ մենք համեմատում ենք նոր ծագած սոցիալական դասակարգերն իրար հետ։ Բուրժուայ մարդիկ և ազնուականներ, պրոլետարներ և արհեստաւորներ կամ հին տեսակիշինականներ,—ահրպիսի հակայական և էական զանազանութիւն այս տարբեր դասակարգերի մէջ։

Ուր որ մենք աչք ձգենք, կուլտուրական կեանքի որ սահմանն էլ դիտողութեան առնենք, հասարակական որ երևոյթին էլ մենք հետևելու լինենք,—ամէն անգամ ևս անդիմադրելի ոյժով հանդէս է գալիս այն համոզմունքը, թէ այդ բոլոր դէպքերում էլ տնտեսական պրոցեսը հզօր, կերպաւորիչ և խորաթափանց ազդեցութիւն ունէ—թող պատմա-փիլիսոփաներն (Geschichtsphilosophen) իրենց հասկացածին պէս ձևակերպեն այդ ազդեցութեան եղանակը,

բայց որ այդ ազդեցութիւնը կայ,—այդ արդէն այլևս հնար չէ ժխտել։ Ազգային տնտեսութեան հարցերով հետաքրքրուել պարտաւոր է ոչ միայն նա, որ գործնական կեանքի մէջ արդէն ենթարկուած է եղել այդ տնտեսութեան ճակատագրական հարուածներին և որին այդ հետաքրքրութիւնը կմղէ իրեն ընկճող պայմաններն ըմբռնելու և այդ ծանր վիճակից դուրս գալու համար ելք որոնելու,—այդ հարցերով պէտք է որ զբաղուէ նաև իւրաքանչիւր ոք, որ այսպէս թէ այնպէս գիտակից է մարդկային ցեղի վիճակին և կուլտուրական կեանքի պայմաններին։ Ըստ որում ամեն ոք պիտի գիտենայ, որ մարդկային և կուլտուրական ձեռնարկութիւնների արմատները տարածուած են տնտեսական հողի մէջ, որ մարդ իր ներքին կեանքն ևս բնաւ պարզել կարող չէ, եթէ նա միաժամանակ չբացատրէ իրեն համար տնտեսական երևոյթների էութիւնը։

IV.

Այսպէս ուրեմն, տեսնում ենք, մեր օրերում երկու կողմից են դիմում ծարաւները սոցիալ-գիտական իմացականութեան աղբիւրին—ամենօրեայ չարքաշ կեանքի հովիտներից և պատմա-փիլիսոփայական սպեկուլացիայի բարձունքներից։ Տնտեսագիտութիւնը կոչուած է ուղեցոյց հանդիսանալու ոչ միայն օրուայ կեանք ունեցող պրոբլեմ-

ների, այլ և լոյս սփռելու մարդկային ցեղի գոյութեան պայմանների յաւիտենական հարցերի վրայ։ Այսպիսով տնտեսագիտութիւնը հանդիսանում մեր օրերում իբրև մի տեսակ *կենտրոնական գիտութիւն*, ինչպէս էր բնագիտութիւնը վերջին տասնամեակներում և փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնն աւելի առաջ։ Դէպի այս կենտրոնական գիտութիւնն են ուղղում իրենց քայլերը վրատահօրէն ոչ միայն այն սակաւաթիւ անձերը, որոնք ի պաշտօնէ զբաղւում են նորանով, այլ և նոքա, որոնք կեանքի առեղծուածների մասին մի պատասխանի են սպասում։ Միայն այսպիսով մեկնելի է այն ընդհանուր հետաքրքրութիւնը, որ կայ մեր ժամանակում դէպի սոցիալական և յատկապէս դէպի տնտեսական գիտութիւնը,—եթէ, իհարկէ, չմոռանանք այդ հետաքրքրութիւնն իբրև լոկ ժողովային մի երևոյթ։ Անհնար չէ, որ մոդան ևս այդտեղ ունէ դեռ խաղալիս լինի և շատերին զրաւէ «հենց այնպէս» մակերևոյթօրէն հետաքրքրուելու տնտեսական հարցերով։ Սակայն ուսումնասիրաների անդին մեծամասնութիւնը հարցին այդպիսի վերաբերմունք ցոյց չէ տալիս։ Ով ինձ նման առիթ է ունեցել յաճախակի ժողովրդական այնպիսի շրջանների հետ շփում ունենալու, որոնք ունկընդրում են տնտեսագիտական հրապարակային կուրսերին, — օրինակ ժողովրդական դպրոցների ուսուցիչների հետ, — այդպիսին կասկածել անգամ կարող չէ, որ սոցիալ-գիտական իմացականութեան ծարաւը յիրաւի գոյութիւն ունէ և մարդկանց հոգու խորքն է թափանցել։ Եւ ուրեմն բնաւ զարմանալի պիտի չթուայ, որ մենք այս գրքոյկում մատնանիշ արած այն բազմաթիւ հիմնապատճառները վերյիշեցինք, որոնք տնտեսական հարցերի հետաքրքրութիւնը մեր օրերում անհրաժեշտօրէն ծագեցրին։

Այս վերջին գիտողութեամբ ես արդէն շօշափեցի տնտեսական և սոցիալ-քաղաքական ճանաչողութեան ունեցած *ընդարձակութեան* հարցը։ Այս էլ, պարզ է, երկու տեսակ է,—իմացականութեան ձգտումը և իմացականութիւնն ինքը։ Եւ որչափ էլ մեր օրերում այդ ձգտումը հանրացած լինի,— և որն անտարակոյս ապագայում աւելի ևս պիտի ծաւալուէ, — բայց և այնպէս նորան գոհացում տալն այժմ դեռ հեռու է և անկատար։ Այժմ տեղը չէ տնտեսագիտութեան ուսուցումի մեթոդն ու նորա անհրաժեշտ վերանորոգումը շօշափել։ Միայն այս անվիճելի հայեցակէտը կուզէի շեշտել, թէ ապագայում հարկ կլինի հիմնելու տնտեսագիտութեան մի ուսումնական սիստեմ, որը զուտ-մասնագիտական ուսուցումով զբաղուելով հանդերձ աստիճանաբար տարածէր ամենահանրամատչելի ծանօթութիւններ։ Ու այս դէպքում տպուած և անտիպ խօսքն անհրաժեշտօրէն պիտի լրացնեն իրար։ Հենց

վերջին տարիներում նկատելի է բաւական մեծ և ուրախաւէթ յառաջադիմութիւն հանրամատչելի գիտական ուսուցումի մեթոդիկայի սահմանում, որի համար մինչնորդող դեր է խաղացել բերանացի ուսուցումը և որը հարկ է աւելի ևս զարգացնել։ Եւ թող այս «սոցիալական պրոգրեսս» ժողովածուի պրակները ծառայեն իբրև մի նպաստ տրնտեսական և սոցիալ-քաղաքական ծանօթութիւններ տարածող գրականութեան և թող նոքա իրենց առաջադրած նպատակին հասնեն։ Այս առաջին, ներածող, պրակի նպատակն է ցոյց տալ և հասկանալի կացուցանել նոյն իսկ ամենաանպատրաստ ընթերցողի համար այն նշանակութիւնը, որ ունէ ամենքի համար տնտեսական կեանքն ուսումնասիրող գիտութիւնը և այդպիսով էլ ակնյայտնի դարձնել այն հանուր անհրաժեշտութիւնը, թէ իւրաքանչիւր ոք պարտաւոր է ըստ կարողութեան ձգտել ընդարձակելու իր ունեցած տնտեսական և սոցիալ-քաղաքական ծանօթութիւնները։

Վ. Ե Ր Ջ.

«Ազգային գրադարան»
NL0187494